ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շինարարական վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/78 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/78-1 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի մայիսի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի և «ՎԱՎԼ» ՍՊԸ-ի հետ կնքված ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/78-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում կատարված համադրումների արդյունքում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել աշխատանքների որոշակի ծավալների փոփոխություններ-ավելացումների:

Փոփոխության նկարագրություն. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի և **«ՎԱՎԼ» ՍՊԸ**-ն միջև 2025 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/78-1 Պայմանագրի.

- Պայմանագրի 5.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 27,620,593.47 (քսանյոթ միլիոն վեց հարյուր քսան հազար հինգ հարյուր իննսուներեք դրամ քառասունյոթ լումա), որից ԱԱՀ-ն՝ 4,603,432.25 (չորս միլիոն վեց հարյուր երեք հազար չորս հարյուր երեսուներկու դրամ քսանհինգ լումա): Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
- Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը 4-րդ չափաբաժնի մասով փոփոխվել և հաստատվել է նոր խմբագրությամբ համաձայն Համաձայնագիր 4-ի Հավելված 1-ի:
- Պայմանագրի Հավելված N 1.4-ին կից՝ հաստատվել է ավելացված աշխատանքների մասով աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը համաձայն Համաձայնագիր 4-ի Հավելված 2-ի:
- Պայմանագրի Հավելված N 3-ով և կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 25-ին կնքված համաձայնագիր 1-ի Հավելված N 2-ով հաստատված վճարման ժամանակացույցները 4-րդ չափաբաժնի մասով փոփոխվել և հաստատվել է համաձայն Համաձայնագիր 4-ի Հավելված N 3-ի:

Փոփոխության հիմնավորում. Պայմանագրի 1.1 և 8.5 կետերի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ**